ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

20 դեկտեմբերի ուրբաթ 2024
տպագրության ԺԴ տարի

179
(3029)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՋՐԱՅԻՆ ՄԵԾ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ Է ՈՒՆԵՆՈՒՄ. ՆԱԽԱԳԻԾԸ ՄՆԱՑ ԹՂԹԻ ՎՐԱ



44-օրյա պատերազմից հետո իշխանությունները փորձեցին կրկին ձեւավորել կառավարություն, սակայն իրենց ներկայացրած հնգամյա հայեցակարգերից եւ ծրագրերից շատերը անգամ չեն մեկնարկել:

Հայաստանյան ներկայիս իշխանությունները 2021 թվականի համապետական ընտրություններին ներկայացրին Կառավարության հնգամյա ծրագիր, որը նախատեսված էր իրականացնել 2021-2026 թվականներին:

Այս ծրագրի կետերից մեկի համաձայն՝ Հայաստանում պետք է կառուցվեր 15 փոքր եւ միջին ջրամբար, սակայն 4 տարվա ընթացքում որեւէ ջրամբարի կառուցման մեկնարկ դեռ չի տրվել:

ՏԿԵ նախկին նախարար եւ այժմ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը Ազգային ժողովում 2021 թվականին հայտարարել էր. «Այս տարի՝ 2020 թվականի բյուջեի կատարողականի ժամանակ, ես այս ամբիոնից հնչեցրել եմ 1.5 տասնյակ ջրամբարների կառուցման մասին: Կառավարությունը քայլեր է ձեռնարկում առաջիկա 10-15 տարում փոքր ջրամբարների կառուցման ուղղությամբ: Այստեղ նույնիսկ ցանկն եմ հնչեցրել, որից 4-ը վերաբերել է Վայոց ձորի մարզին: Այդ ցանկի մեջ է Ելփինի ջրամբարը, ինչպես նաեւ Խնձորուտի, Խաչիկի Վերնաշենի ջրամբարները:

Այս ուղղությամբ առաջիկայում աշխատանքներ կտարվեն նախագծային-նախահաշվային փաստաթղթերի ձեւակերպման, եւ 10-ից 15 տարում դրանց ամբողջական կառուցման, խնդիրը լուծելու ուղղությամբ»:

2023 թվականին ՔՊ-ի համար բաղձալի եւ տենչալի, սակայն անիրականանալի ջրամբարների կառուցման ծրագրում մի բան պարզ դարձավ. Հայաստանում ջրամբար նախագծող մեկ ընկերություն կար:

Այս նախագիծը նոր չէ. 2019 թվականին Ջրային տնտեսության կոմիտեի նախագահի նախկին տեղակալ Միհրան Հովհաննիսյանը «Արմենպրես»-ի հետ զրույցում նշել էր, որ արդեն 22 փոքր ծավալի ջրամբարի կառուցման ծրագիր կա մշակված:

22-ը դարձավ 15. «Հայաստանի ամբողջ ջրամբարներում տարեկան կուտակում ենք 1 մլրդ 200 մլն խմ ջուր: Ընդհանուր առմամբ, Հայաստանում մակերեսային հոսող ջրերի ծավալը մոտավոր 7 մլրդ խմ է, որից ոռոգման նպատակով օգտագործվում է 1մլրդ 500-ից 1 մլրդ 800 մլն խորանարդ մետրը: Մնացածը Հայաստանից հոսում է դուրս՝ հարեւան երկրներ: Մենք նախատեսում ենք ավելացնել ջրամբարների թիվը: Ներկայում 22 փոքր ծավալով ջրամբարների ծրագիր կա մշակված»,- ասել էր Միհրան Հովհաննիսյանը:

Նշված այս 22 ջրամբարի ընդհանուր ծավալը պետք է կազմեր 127 մլն խմ, իսկ ընդհանուր ծրագրի նախնական արժեքը հաշվարկվել էր 220 մլն դոլար: Անգամ նախատեսվող գումարը հաշվարկված էր, սակայն ծրագիրն այդպես էլ մնաց թղթի վրա:

Իշխանության նպատակն է ջուրն ամբարել Հայաստանի ներսում, սակայն դրա համար չեն կառուցվում միլիոններ արժեցող ջրամբարներ եւ չեն վերանորոգվում ոռոգման ջրի ուղիները, ու արդյունքում Հայաստանն ունենում է ահռելի քանակի ջրային կորուստներ, որոնք թվային տվյալներով կներկայացնենք հաջորդիվ:

Փոխարենը տարեկան 1-2 ջրամբար կառուցելուն, որն ավելի հրատապ եւ կարեւոր է, Կառավարությունը ջանք ու եռանդ չի խնայում մի բզկտված «Ակադեմիական քաղաք» ծրագրի համար հատկացնել 1,2 տրիլիոն գումար:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հաջորդ շաբաթ ընդդիմադիր «Հայաստան» դաշինքը ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ հավաք է անելու: Այն կլինի դաշինքի այս տարվա վերջին հավաք-քննարկումը: Մեզ հետ զրույցում տեղեկությունը հաստատեց նաեւ ԱԺ «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանը՝ նշելով, որ ամեն տարվա ավարտին էլ հավաքվում են, դաշինքի առաջնորդ Ռոբերտ Քոչարյանի հետ ամփոփում տարին ու քննարկում առաջիկա անելիքները թե՛ խորհրդարանում, թե՛ փողոցային պայքարի վերաբերյալ: Նշենք, որ «Սրբազան շարժման» առաջնորդ Բագրատ սրբազանը հայտարարել է, որ այս օրերին քննարկումների ու վերադասավորումների փուլում են, պատրաստվում են կրկին փողոց դուրս գալ. ուստի առաջիկայում ընդդիմությունը կրկին վերսկսելու է փողոցային պայքարն ու հանրահավաքները:



Դատական համակարգը ահազանգում է, որ բոլոր դատավորների՝ հատկապես հակակոռուպցիոն դատարանի դատավորների աշխատասենյակում գաղտնի տեսախցիկներ կան դրված՝ հնարավոր կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով: Այսինքն՝ դատավորները ազատ աշխատելու, խոսելու, անձնական գաղտնիության իրավունք չունեն. սա մարդու իրավունքների ոտնահարում է: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ դատավորների աշխատանքը, փաստացի, ներքին դիտման տակ է: Դատական համակարգի ահազանգի վերաբերյալ տեղեկությունը փորձեցինք պարզել ԲԴԽ-ից, որտեղից ի պատասխան՝ հայտնեցին, որ դատարանի կողմից, մասնավորապես՝ հակակոռուպցիոն դատարանից, նմանատիպ որեւէ հարց չի բարձրացվել Բարձրագույն դատական խորհրդին: Այսինքն՝ տեղյակ չեն, հետեւաբար չեն էլ հետաքրքրվում:

ՔՊ-ն Կառավարության հարեւանությամբ վարձակալած շենքը, որը վերանորոգումներից հետո պետք է ծառայեցներ որպես կուսակցության գլխավոր գրասենյակ, հետ է վերադարձրել պետությանը: «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկությունը հայտնեց ՔՊ կուսակցության փոխնախագահ Վահագն Ալեքսանյանը: Տեղեկացանք նաեւ, որ շենքն աճուրդի է հանվելու: ՔՊ-ն նոր գրասենյակը վարձակալել էր դեռ 2022 թվականին՝ Հանրապետության 47 հասցեում գտնվող շենքում, որը «Հանրապետական» կուսակցության կենտրոնական գրասենյակի եւ ՀՅԴ գրասենյակի հարեւանությամբ էր: Այդ տարածքում նախկինում եղել է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության գրասենյակը: ՔՊ-ից ArmLur.am-ին ավելի վաղ հայտնել էին, որ Կառավարության հարեւանությամբ գտնվող շենքի ամսական վարձավճարը 3,990,000 ՀՀ դրամ է՝ մոտ 10 հազար ԱՄՆ դոլար: Ամիսներ շարունակ վերանորոգումից հետո, փաստորեն, իշխանությունը փոշմանել է ու չի տեղափոխվի նոր գրասենյակ: Փոխարենը ՔՊ-ն վերանորոգել է Սայաթ-Նովա փողոցում գտնվող գրասենյակը:

ԶՐՈՒՅՑ

«ԱԴՐԲԵՋԱՆԻ ԹԻՐԱԽՈՒՄ ԴԵՌ ՇԱՏԵՐԸ ԿՀԱՅՏՆՎԵՆ», ՆԵՐՍԻՍՅԱՆ

Երեկ տեղեկություն տարածվեց այն մասին, որ Բաքվում պահվող Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանի նկատմամբ նոր մեղադրանքներ են առաջադրվել, որի հետեւանքով նա կարող է ցկյանս զրկվել ազատությունից:

«Ժողովուրդ» օրաթերթը այս եւ այլ հարցերի շուրջ զրուցել է Արցախի նախկին գլխավոր դատախազ, այժմ փաստաբանական գործունեությամբ զբաղվող Գուրգեն Ներսիսյանի հետ:

-Պարոն Ներսիսյան, որպես Արցախի նախկին գլխավոր դատախազ, այժմ որպես փաստաբան, ինչպե՞ս կմեկնաբանեք Բաքվից վերջերս հնչած հայտարարությունը, որ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարությանն առնչվող շինծու գործով կան բացահայտված մի շարք անձինք (ըստ Ադրբեջանի՝ հանցանք կատարած անձանց մասին է խոսքը), որոնք այժմ գտնվում են Հայաստանի Հանրապետության տարածքում, եւ որոնց հետ կապված Ադրբեջանը Հայաստանից ակնկալում է համագործակցություն:

-2020 թվականի 44-օրյա պատերազմում Ադրբեջանի նպատակը եղել է շատ կարճ ժամկետում ողջ Արցախի գրավումը, կամ առնվազն այնպիսի դիրքերի հասնելը, որի պայմաններում Արցախը կհայաթափվեր: 2020թ. նոյեմբերի 9-ին Ադրբեջանը համաձայնել է կրակի դադարեցմանը, քանի որ վստահ էր, որ դրանից հետո, միեւնույնն է, արցախցիները կհեռանան, եւ Արցախը կդատարկվի: Բայց ստացվեց այնպես, որ 2020թ. նոյեմբերի 9-ից ընդամենը օրեր անց սկսվեց Արցախի ժողովրդի վերադարձը: Այդ պատճառով 2020թ. նոյեմբերի 9-ից հետո Ադրբեջանի կողմից ակտիվ ռազմական գործողությունները փոխակերպվեցին ամենօրյա տեղային դեպքերի՝ սպանություններ, մարդկանց գույքի եւ սեփականության ոչնչացում կամ վնասում, մարդկանց ու բնակելի տների թիրախավորում, գյուղատնտեսական աշխատանքների խաթարում եւ այդպես շարունակ՝ մինչեւ Արցախի մասնակի, իսկ հետո լրիվ շրջափակում: Արցախի տեւական շրջափակումը, շրջափակման պայմաններում հյուծված ժողովրդի վրա զինված հարձակումը եւ հետո մի քանի օրով ճանապարհի բացումը պետք է տար այն արդյունքը, որը սովորաբար բխում է մարդու ինքնապահպանության բնազդից: Այդ ամենն իրագործելուց հետո պետք է սկսվեր արցախյան շարժումն ու վերջին երեսունհինգամյա պատմությունը որպես ապօրինություն, որպես որոշ անձանց հանցավոր գործունեության արդյունք ներկայացնելու եւ իրավական փաստաթղթերով ամրագրելու գործընթացը, որը հիմա տեղի է ունենում: Կարծում եմ՝ այդ նպատակը լիարժեք իրագործելու համար Ադրբեջանին չեն բավականացնում այնտեղ պահվող հայ ռազմագերիները: Բայց, քանի որ այլ անձինք նրանց տիրապետության տակ չկան, Ադրբեջանի նպատակն է առնվազն հնչեցնել նոր անուններ, այդ անձանց վերագրել կատարված ամենատարբեր հանցանքներ, այդ թվում՝ գերեվարված անձանցից կորզված ցուցմունքների հիման վրա: Կարծում եմ, որ թիրախավորվելու են ոչ միայն արցախյան ու հայաստանյան նախկին, այլեւ 2020թ. ու դրանից հետո իշխանությունների ներկայացուցիչները, պաշտպանության ու անվտանգության համար պատասխանատու կամ այդ գործընթացին ներգրավված անձինք: Հարցը այն չէ, թե ինչ կանի այդ դեպքում Հայաստանը, հարցը այն է, որ Ադրբեջանում տեղի ունեցող «դատավարության» շրջանակում հրապարակային ու լսելի կլինեն նաեւ այդ «մեղադրանքները»՝ իրենց հեռահար նպատակներով: Իսկ երբ անհրաժեշտ կլինի, Հայաստանի հանդեպ կներկայացվեն մարդկության դեմ ուղղված հանցանքների բացահայտման գործում չհամագործակցելու մեղադրանքներ, կամ այդ հանգամանքը առաջ կքաշվի որպես ինչ-որ գործընթացի խոչընդոտող պայման:

-Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ են անընդհատ խստացվում Բաքվում պահվող՝ Արցախի նախկին ռազմաքաղաքական ղեկավարության մեղադրանքները: Ըստ հրապարակված վերջին տեղեկությունների՝ օրինակ Ռուբեն Վարդանյանին սպառնում է ցմահ ազատազրկում:

-Գիտե՞ք, իրականում առաջնայինը պատժաչափը չէ, այս գործընթացում Ադրբեջանի համար էական է մեղադրանքի փաստական կողմը, այսինքն՝ այն արարքները, որոնց կատարման մեջ մեղադրվում են նախկին նախագահները, Ռուբեն Վարդանյանը եւ մյուսները, հետո կարեւոր է դրանց քրեաիրավական գնահատականը: Մեղադրանքները անընդհատ փոփոխվում են, որովհետեւ նպատակը նույնն է՝ Արցախյան շարժումը իրավական առումով ներկայացնել որպես «զարհուրելի» հանցագործությունների մի ամբողջություն. Ադրբեջանի համար կարեւոր է, թե ինչ արարքների կատարման մեջ է դատարանը մեղավոր ճանաչելու այդ մարդկանց, որովհետեւ այս ամենն արվում է ոչ միայն ներքին, այլեւ ու առավելապես արտաքին լսարանի համար: Իսկ արտաքին լսարանը, որպես կանոն, ստանում ու ընկալում է այն տեղեկությունը, որը նրան հրամցնում են՝ առանց դատի ու դատաստանի որակն ու մեղադրանքի ապացուցվածությունը գնահատելու: Ինչ վերաբերում է պատժատեսակներին ու պատժաչափերին, ապա դրանք նշանակություն են ունենալու արդեն հետագայում: Պատժի չափը ցույց է տալու այդ հարցի կշիռն ու արժեքը, եթե որեւէ մեկը, կամ թեկուզ միջազգային հանրությունը փորձի նրանցից որեւէ մեկի համար միջնորդական առաքելությամբ հանդես գալ:

Շարունակությունը՝ ArmLur.am լրատվական կայքում:

Զրուցեց ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԱՎԱԳԱՆԻՆ ԿՀԱՍՏԱՏԻ 2025 Թ. ԲՅՈՒՋԵՆ

Երեւանի ավագանին հաջորդ շաբաթ՝ դեկտեմբերի 24-ին, այս տարվա վերջին նիստը կհրավիրի:

Նիստի օրակարգում 18 հարց է ընդգրկված:

Ավագանին տարեվերջյան նիստում կհաստատի Երեւան քաղաքի 2025 թվականի բյուջեն եւ զարգացման ծրագիրը:

Ըստ նախագծի՝ Երեւանի 2025 թվականի բյուջեն կազմելու է.

եկամուտների գծով՝ 159,399,554.2 հազ. դրամ,

ծախսերի գծով՝ 159,487,359.7 հազ. դրամ,

դեֆիցիտը (պակասուրդը)՝ 87,805.5 հազ. դրամ:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ Է ՈՒՂԱՐԿԵԼ

Խորհրդականի ձերբակալությունից հետո Նիկոլ Փաշինյանը Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանին արձակուրդ է ուղարկել:

Հիշեցնենք, որ ընդամենը օրեր առաջ՝ դեկտեմբերի 16-ին հայտնի դարձավ, որ Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանի խորհրդականը, թմրամիջոց պահելու կասկածանքով, ձերբակալվել է: Մարզպետի օգնական-խորհրդականի գործով 1 անձի ներկայացվել է մեղադրանք, խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը:

Աղմկահարույց ձերբակալություններից 2 օր անց Նիկոլ Փաշինյանը 6 օրով արձակուրդ է ուղարկել մարզպետին, որպեսզի որոշի նրա ճակատագիրը:

Չի բացառվում, որ առաջիկայում Փաշինյանից մի sms էլ Արագածոտնի մարզպետը ստանա ու չվերադառնա արձակուրդից:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՄԱՆԴԱՏԸ ՀԱՆՁՆՎԵԼ Է ՋՈՒԼԻԵՏԱ ԱԶԱՐՅԱՆԻՆ

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը դեկտեմբերի 18-ին ստացել է ԱԺ պատգամավոր Դավիթ Առուշանյանի՝ լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ արձանագրությունը:

ԿԸՀ-ն դեկտեմբերի 19-ի արտահերթ նիստում արձանագրել է, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակից ընտրված եւ լիազորությունները վաղաժամկետ դադարած պատգամավորի մանդատը տրվում է նույն կուսակցության ընտրական ցուցակի առաջին մասի հերթական հաջորդ թեկնածու Ջուլիետա Հովսեփի Ազարյանին:

ԴԱՎԻԹ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԸ՝ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

Դավիթ Առուշանյանը նշանակվեց Շիրակի մարզպետ: Այդ մասին որոշումը Կառավարության՝ դեկտեմբերի 19-ի նիստին հայտնեց վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ապա շնորհավորեց նրան:

Դավիթ Առուշանյանը շնորհակալություն հայտնեց վստահության համար, ապա հավելեց. «Ինձ համար մեծ պատասխանատվություն եւ պատիվ է հայրենի մարզի կառավարումը ստանձնելը: Վստահ եմ, որ մեր բոլորի ջանքերով եւ մեր Շիրակի մարզի թիմի ջանքերով հաջողելու ենք»:

Ավելի վաղ ArmLur.am-ը տեղեկացրել էր, որ Շիրակի մարզպետի պաշտոնում կառաջադրվի Դավիթ Առուշանյանի թեկնածությունը:

Հիշեցնենք՝ Դավիթ Առուշանյանը վայր էր դրել պատգամավորական մանդատը:

ԱՄՆ ՊԵՏԴԵՊԻ ԽՈՍՆԱԿԸ՝ ՀԱՅ ԳԵՐԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Միացյալ Նահանգները շարունակելու է հետեւողականորեն կոչ անել Ադրբեջանին՝ հարգելու մարդու իրավունքները, այդ թվում՝ բանտարկյալների հիմնարար իրավունքներն ու ազատությունները, եւ շարունակելու է այդ ուղղությամբ քայլեր ձեռնարկել: Այս մասին լրագրողների հետ զրույցում ասել է ԱՄՆ պետքարտուղարության խոսնակ Մեթյու Միլլերը՝ խոսելով Ադրբեջանի բանտերում պահվող հայ բանտարկյալների ճակատագրի մասին:

«Մենք հետեւողականորեն կոչ ենք անում Ադրբեջանին՝հարգելու իր երկրում գտնվող բոլոր անձանց իրավունքները եւ հիմնարար ազատությունները, այդ թվում՝ բանտարկյալների: Դուք տեսել եք, որ մենք քայլեր ենք ձեռնարկում, երբ տեսնում ենք, որ Ադրբեջանը չի հարգում իր երկրի ներսում բոլոր անձանց «մարդու հիմնարար իրավունքները», եւ մենք շարունակելու ենք վարել այդ քաղաքականությունը»,-հայտարարել է պետքարտուղարության խոսնակը:

Լրագրողը, մասնավորապես, օրինակ է բերել Ադրբեջանում անօրինաբար կալանքի տակ պահվող Ռուբեն Վարդանյանի փաստաբանին՝ Ջարեդ Գենսերին, որին Ադրբեջանը մերժում է մուտքի թույլտվություն տրամադրել, ինչն էլ անհնարին է դարձնում Վարդանյանի պաշտպանությունը եւ խախտում նրա հիմնարար իրավունքները:

ՈՒԿՐԱԻՆԱՆ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ՆԱՏՕ-ՈՒՄ



ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինկենը, ելույթ ունենալով Արտաքին հարաբերությունների խորհրդում, վստահություն է հայտնել, որ Ուկրաինան կդառնա ՆԱՏՕ-ի անդամ, սակայն դրա համար երկիրը պետք է «գործնական քայլեր» ձեռնարկի՝ ներառյալ ժողովրդավարության ամրապնդումը եւ ռազմական ինստիտուտների բարեփոխումը: «Ի վերջո, Ուկրաինան կլինի եւ պետք է լինի ՆԱՏՕ-ում»,- ասել է նա: Բլինկենը մերժել է այն պնդումները, թե ԱՄՆ-ն եւ Գերմանիան խոչընդոտում են Կիեւի միացմանը դաշինքին:

ԱԿԱՆԱՋԵՐԾՈՒՄ

Սլովակիայի կառավարությունը հավանություն է տվել Ուկրաինային լոգիստիկ օգնության եւս մեկ փաթեթի փոխանցմանը, որը ներառում է ականազերծման համակարգեր եւ թունավոր նյութեր հայտնաբերելու դետեկտորներ: Այդ մասին ասված է Սլովակիայի նախարարների կաբինետի տարածած հաղորդագրության մեջ:

«Այս օգնության նպատակն է աջակցել Ուկրաինային՝ հաղթահարելու ներկայիս հակամարտության հետեւանքները նրա բնակչության եւ ենթակառուցվածքների համար, հետաբար այն մարդասիրական բնույթ է կրում», - ասված է հաղորդագրության մեջ:

Նախատեսվում է, որ օգնության փոխանցումը տեղի կունենա 2024 թվականի դեկտեմբերից 2025 թվականի մայիս ընկած ժամանակահատվածում:

ԿԱՆԱԴԱՆ՝ ԱՄՆ-Ի 51-ՐԴ ՆԱՀԱՆԳ. ԻՆՉ Է «ՈՐՈՇԵԼ» ԹՐԱՄՓԸ

ԱՄՆ նախագահ ընտրված Դոնալդ Թրամփն առաջարկել է դիտարկել Կանադան Միացյալ Նահանգների կազմում որպես 51-րդ նահանգ ներառելու հնարավորությունը՝ հայտարարելով, որ նման քայլը կարող է զգալիորեն կրճատել կանադացիների ծախսերը:

«Ոչ ոք չի կարող պատասխանել այն հարցին, թե ինչու ենք մենք տարեկան ավելի քան 100 միլիոն դոլար սուբսիդիա տրամադրում Կանադային: Դա անիմաստ է: Կանադացիներից շատերը ցանկանում են, որ Կանադան դառնա 51-րդ նահանգը: Նրանք հարկերի եւ ռազմական պաշտպանության ոլորտում հսկայական գումար կխնայեն: Կարծում եմ՝ դա հիանալի գաղափար է: 51-րդ նահանգ», - գրել է Թրամփն իր Truth Social սոցիալական ցանցում:

Թ. ԹՈՎՄԱՍՅԱՆԸ ԴԻՄԵԼ Է ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ

ՉԱԽՈՅԱՆԸ ՊԵՏՔ Է ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԻ ՍՈՒՏ ՄԱՏՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի նախագահի պաշտոնից ապօրինաբար հեռացված, ՀՀ ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է.

«Նախօրեին հրապարակել էի տեղեկություն, որ ԱԺ պատգամավոր Հովիկ Աղազարյանի հեռախոսի բովանդակության տարածման անթույլատրելիության հարցով դիմել եմ իմ միջազգային գործընկերներին, եւ ահա ես եմ հայտնվել Կառավարության թիրախում:

Ներկայացնելով ինչպես ներպետական օրենսդրությունը, այնպես էլ միջազգային իրավունքի նորմերը, որոնք խստորեն արգելում են մարդու անձնական նամակագրության հանրայնացումը՝ ընգծել էի, որ դա իշխանությունն արել է, եւ ակնկալել էի գործողություններ:

Իմ գրության մեջ հատուկ շեշտել էի, որ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Տարոն Չախոյանի հետ փոխկապակցված կայքերը թիրախավորված հոդվածներ են տարածել պատգամավոր Աղազարյանի սեռական կողմնորոշման վերաբերյալ:

Իմ քաղաքական գործունեության արդյունքում, այդ գրություններից հետո, ես դարձել եմ Տարոն Չախոյանի թիրախը: Նա ոչ միայն իր սոցիալական էջում, այլեւ իր հետ փոխկապակցված կայքերում իմ հասցեին տարածել է ոչ միայն վիրավորական եւ անհիմն պնդումներ, այլեւ հրապարակել է բացարձակ ՍՈՒՏ պատմություն, թե իբր ես տարիներ առաջ ապօրինի ձայնագրել եմ Նիկոլ Փաշինյանի մասնակցությամբ ինչ-որ նիստ, եւ այն փոխանցել Սերժ Սարգսյանին:

Բայց, քանի որ

- Ես չեմ մասնակցել որեւէ նման հանդիպման, հետեւաբար չէի կարող իրականացնել ապօրինի ձայնագրություն (թեեւ իմ տեսակը չէ գաղտնի ձայնագրություններ անելը)
- Սկսած 2019 թվականից՝ երկու տարի շարունակ ես չեմ մասնակցել ՔՊ խմբակցության («Իմ քայլը») նիստերին՝ ցանկացած արտահոսքի մեղադրանքներից խուսափելու համար:

Հետեւաբար, այսօր դիմել եմ ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին՝ ՊԱՀԱՆՋԵԼՈՎ նախաձեռնել վարույթ եւ քննությամբ պարզել

1. Սերժ Սարգսյանին փոխանցված ձայնագրությունը՝ ո՞վ կամ ովքե՞ր են այն իրականացրել, ե՞րբ եւ ի՞նչ պայմաններում:
2. Ո՞վ կամ ովքե՞ր են մասնակցել հիշատակված հանդիպմանը եւ ինչպե՞ս են փոխանցել այդ ձայնագրությունը:
3. Հարցաքննել Տարոն Չախոյանին՝ պահանջելով փաստեր իր հայտարարությունների վերաբերյալ, իսկ ապացույցների բացակայության դեպքում նրան պատասխանատվության ենթարկել՝ ՍՈՒՏ ՄԱՏՆՈՒԹՅԱՆ հատկանիշներով:

Ես շարունակելու եմ հետեւել այս գործընթացին եւ, ինչպես միշտ, հանրայնորեն կիսվել զարգացումներով ու արդյունքներով:

Նիկոլ Փաշինյանը, նրա «ֆեյքը» կամ «ֆեյքերը» չեն կարող ինձ վերագրել արարքներ, որոնք ՉԵՄ ԱՐԵԼ:

Թող իրավապահները պարզեն ճշմարտությունը. ոչ մի մուկ, ոչ մի ձուկ եւ ոչ մի այլ լպրծուն կենդանի չեն պլստալու», - գրել է պատգամավորը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀՂԻ ԿՆՈՋԸ ՎՐԱԵՐԹԻ ԵՆԹԱՐԿԱԾ ԿԱՋՄԸ ՉԻ՞ ԴԱՏԱՊԱՐՏՎՈՒՄ

Փաստաբան Ռաֆֆի Ասլանյանը «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում է. «Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը՝ նախագահությամբ դատավոր Մասիս Մելքոնյանի, բավարարել է Սոնա Մնացականյանին վրաերթի ենթարկելու դեպքով ՀՀ վարչապետի ավտոշարասյան ղեկավար կազմի նկատմամբ քրեական հետապնդում չհարուցելու մասին հսկող դատախազի որոշման դեմ իմ կողմից ներկայացված բողոքը՝ այդ որոշումը համարելով անօրինական՝ վարույթի հանրային մասնակիցներին պարտավորեցնելով նոր քննությամբ վերացնել տուժողի իրավունքների խախտումը»:

ԱՋԱՏ ԱՐՁԱԿՄԱՆ ԿՈՉ

Ավստրալիայի խորհրդարանի անդամ Մայքլ Սուկկարը դիմել է Ադրբեջանի գործերի ժամանակավոր հավատարմատար Վագիֆ Ջաֆարովին՝ կոչ անելով անհապաղ ազատ արձակել Բակո Սահակյանին:

Իր նամակում Սուկկարը դեսպանությանը տեղեկացրել է Սահակյանի համար որպես հովանավոր հանդես գալու մտադրության մասին եւ հորդորել ամենամսյա թարմացումներ տրամադրել Արցախի նախկին նախագահի ֆիզիկական եւ հոգեկան վիճակի վերաբերյալ:

«Պարոն Սահակյանին հովանավորելու իմ որոշումը պայմանավորված է հայ քաղբանտարկյալների փաստաբանների, մասնավորապես՝ Ջարեդ Գենսերի զեկույցներով: Վերջինս ՄԱԿ-ի հատուկ զեկուցողին հայտնել է խոշտանգումների, անմարդկային վերաբերմունքի սարսափելի դեպքերի մասին», - Ջաֆարովին ուղղված նամակում գրել է Սուկկարը:

Ավստրալիայի Հայ դատի հանձնախմբի գործադիր տնօրեն Միքայել Քոլոքոսյանը համայնքի խորին երախտագիտությունն է հայտնել պատգամավոր Մայքլ Սուկկարը Բակո Սահակյանի համար քաղաքական հովանավոր լինելու իր հանձնառության համար՝ ընդգծելով արդարության համար պայքարում նման քարոզչության կարեւորությունը:

Մինչդեռ խորհրդարանի մեկ այլ պատգամավոր Փոլ Ֆլեթչերը նույն պահանջով հանդես է եկել օկուպացված Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախկին նախագահ Դավիթ Իշխանյանի վերաբերյալ:

Նա եւս նամակ է գրել Ադրբեջանի դեսպանատանը՝ կոչ անելով անհապաղ ազատ արձակել Իշխանյանին:

Վագիֆ Ջաֆարովին ուղղված նամակում Ֆլեթչերը կոչ է արել կանոնավոր կերպով տեղեկացնել Իշխանյանի հոգեկան եւ ֆիզիկական առողջական վիճակի վերաբերյալ:

«Հաճույք եմ ստացել 2019 թվականին մեր Դաշնային խորհրդարանում անձամբ հանդիպել պարոն Իշխանյանի հետ իմ տասնյակ խորհրդարանական գործընկերների հետ, եւ այդ պատճառով Ադրբեջանի պետական անվտանգության ծառայության կողմից նրա ձերբակալության եւ կալանավորման պայմաններն առանձնապես մտահոգիչ են ինձ համար... Աշխարհը հետեւում է Ադրբեջանին. Ավստրալիան հետեւում է Ադրբեջանին», - գրել է խորհրդարանականը:

Ավստրալիայի Հայ դատի հանձնախումբն իր խորին երախտագիտությունն է հայտնել Ֆլեթչերին բոլոր հայ պատանդների ազատ արձակմանն ուղղված իր նամակի եւ հանձնառության համար:

Այժմ Բաքվում ապօրինի կալանքի տակ են պահվում նախկին նախագահներ Արկադի Ղուկասյանը, Բակո Սահակյանը եւ Արայիկ Հարությունյանը, ԱԺ նախագահ Դավիթ Իշխանյանը, նախկին արտգործնախարար Դավիթ Բաբայանը, ՊԲ նախկին հրամանատար Լեւոն Մնացականյանը, նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը եւ ԶՈՒ շտաբի նախկին պետ Դավիթ Մանուկյանը:

ԱՄԲԱՐՁԻՉԻ ՎԱՐՈՐԴԸ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԸՆԿԵԼ Է ՈՒ ՎՆԱՍՎԵԼ

ՄԵՂԱԴՐԱՆՔ Է ԱՌԱՋԱԴՐՎԵԼ ՏՆՕՐԵՆԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Վարդան Արշավիրի Կարապետյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «Ռոյալ Արմենիա» Հ/Ձ ՍՊ ընկերության տնօրենի՝ 2022 թվականի փետրվարի 24-ի թիվ 6 ԱՊ հրամանի հիման վրա, հանդիսանալով «Ռոյալ Արմենիա» Հ/Ձ ՍՊ ընկերության ամբարձիչի /ավտոկառ/ վարողդ, դաստաճ հրահանգավորված լինելով աշխատավայրում ամբարձիչ տեխնիկայի անվտանգության կանոնները դահիդանելու վերաբերյալ եւ հանդիսանալով նույն ընկերության ամբարձիչ սարքավորումների աշխատանքների անվտանգ շահագործման դասասխանատու անձ, խախտելով «Տեխնիկական անվտանգության ապահովման դեսական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա եւ ՀՀ տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի հունիսի 18-ի թիվ 594-Ն հրամանով սահմանված դահանջների համաձայն «Ռոյալ Արմենիա» Հ/Ձ ՍՊ ընկերության կողմից մշակված եւ տնօրենի կողմից 18.02.2021 թ-ին հաստատված ամբարձիչ սարքավորման (ավտոկառ) վերաբերյալ «Արտադրական վտանգավոր օբյեկտների տեխնիկական անվտանգության» վկայագրի 1.4 կետի (այն է՝ «..արգելվում է ամբարձիչի կիրառումը մարդկանց, դայթյունավտանգ կամ թունավոր նյութերի բարձրացման համար...») եւ նույն ընկերության կողմից մշակված ու 24.02.2021թ.-ին հաստատված «Ավտոկառի տեխնիկայի անվտանգության կանոններ» Հրահանգի 11-րդ բաժնի բ) (այն է՝ «Եղանային բեռնիչները նախատեսված են բեռների, այլ ոչ թե մարդկանց տեղափոխման համար», գ) (այն է՝ «մի օգտագործեք եղանային բարձիչը մարդկանց բարձրացնելու համար:

Անհրաժեշտության դեպքում մարդ բարձրացնելու համար պետք է օգտագործել միայն հուսալի ամրացված եւ արգելապատնեշներով հարթակ՝ պահպանելով անվտանգության եւ նախազգուշական միջոցները», եւ նույն հրահանգի 13-րդ բաժնի ա) («հիշեք այն մասին, որ թեք հարթությունով վերեւ բարձրանալիս հարկավոր է շարժվել հետընթացով, հատկապես բեռ տեղափոխելու ժամանակ») եւ բ) («արգելվում է կատարել բեռնում եւ բեռնաթափում թեք հարթության վրա») կետերի պահանջները, 2023 թվականի փետրվարի 10-ին՝ ժամը 14:00-ի սահմաններում, Երեւան քաղաքի Հաղթանակ 1 հասցեում գործող «Ռոյալ Արմենիա» Հ/Ձ ՍՊ ընկերությունում որպես էլեկտրիկ աշխատող Գեւորգ Արսենի Գեւորգյանի խնդրանքով, վերջինիս կողմից ընկերության տարածքում նախապես պլանավորված նոր օդային էլեկտրական մալուխների անցկացման աշխատանքներ իրականացնելու նպատակով, իր կողմից շահագործվող բեռների բարձրացման եւ տեղափոխման համար նախատեսված ամբարձիչ տեխնիկայի (ավտոկառի) բարձրացման մեխանիզմի վրա ինքնակամ հավաքակցված մետաղական զամբյուղով Գեւորգ Գեւորգյանին բարձրացրել է մոտ 4-5 մետր բարձրության վրա. այդ ընթացքում հերթական անգամ, տեխնիկայի առաջ շարժվելու ժամանակ, թեք տարածության վրա ավտոկառը կողաշրջվել է, ինչի արդյունքում Գեւորգ Գեւորգյանը վայր է ընկել գետնին՝ ստանալով ձախ ազդրոսկրի փակ բազմաբեկոր կոտրվածքի, գլխի աջից գագաթային շրջանի սալջարդ վերքի ձեւով մարմնական վնասվածքները, որոնք վերջինիս առողջությանը պատճառել են ծանր վնաս՝ ընդհանուր աշխատունակության 1/3-ից ավելի կայուն կորստի հատկանիշով:

Այսինքն՝ Վարդան Արշավիրի Կարապետյանը «Ռոյալ Արմենիա» Հ/Ձ ՍՊ ընկերության հետ կնքած աշխատանքային պայմանագրով եւ վերը մեջբերված հրամանի համաձայն՝ պարտավոր լինելով պահպանել աշխատանքների կատարման ընթացքում աշխատանքի պաշտպանության եւ անվտանգության ապահովման՝ օրենսդրությամբ սահմանված եւ վերը մեջբերված կանոններն ու պահանջները, խախտել է դրանք, որի հետեւանքով Գեւորգ Արսենի Գեւորգյանի առողջությանը անզգուշությամբ պատճառվել է ծանր վնաս:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԹՄՐԱՆՅՈՒԹԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ՄԱՐԶՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆԻՆ ՄԵՂԱԴՐԱՆՔ ԱՌԱՋԱԴՐՎԵՑ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանի խորհրդական-օգնականին մեղադրանք է առաջադրվել:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց տեղեկությունը պարզել կոմիտեից, որտեղից էլ ի պատասխան հայտնեցին. «Արագածոտնի մարզպետի օգնական-խորհրդականի գործով 1 անձի ներկայացվել է մեղադրանք, խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը»:

Ավելի վաղ հայտնել էինք, որ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Արագածոտնի մարզպետի օգնականը ձերբակալվել է:

Տեղեկությունը փորձել էինք պարզել անձամբ Քննչական կոմիտեից, որտեղի ի պատասխան՝ միայն հայտնեցին, որ կա մեկ ձերբակալված, եւ քրեական վարույթ է նախաձեռնվել ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի առաջին մասի (1. Իրացնելու նպատակով թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) կամ դրանց ածանցյալ ապօրինի արտադրելը, պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, տեղափոխելը, առաքելը, տարածելը, գովազդելը կամ դրանք ապօրինի իրացնելը կամ մեկ ուրիշի դրդմամբ՝ նրա համար թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) կամ դրանց ածանցյալ ապօրինի ձեռք բերելը) համաձայն, ըստ որի՝ գործողությունը կատարողը պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով, եւ 396-րդ հոդվածի առաջին մասի՝ (1. Առանց իրացնելու նպատակի զգալի չափերով թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) կամ դրանց ածանցյալ կամ պրեկուրսոր ապօրինի արտադրելը, պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, տեղափոխելը կամ առաքելը) համաձայն՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը հարյուր ժամ տեւողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

Նշենք, որ Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանն ու մարզային ոստիկանապետը խոր հակամարտության մեջ են:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ պաշտոնյաների ներքին կռիվը ուղիղ կապ ունի մարզպետի քրեական պատմությունների մեջ ներգրավված լինելու հնարավոր առնչություններին:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՊՆ ՄԵՔԵՆԱՅԻ ԱՆՍԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ 4 ԶԻՆՎՈՐ Է ՄԱՀԱՑԵԼ

2024 թվականի ապրիլի 12-ին ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 9-րդ կայազորային քննչական բաժնում նախաձեռնված քրեական վարույթով պարզվել է, որ ՊՆ զորամասի հաշվեկշռում գտնվող «Ուրալ» մակնիշի ավտոմեքենան անսարք վիճակում դուրս է եկել երթի եւ վթարի ենթարկվել:

Մասնավորապես, դեպքից առաջ՝ 2024 թվականի ապրիլի 9-11-ն ընկած ժամանակահատվածում, Ս.Գ.-ն եւ Հ.Հ.-ն ավտոմեքենայի տեխնիկական խնդիրների վերաբերյալ տեղեկացրել են զորամասի տեխնիկական մասի պետին եւ զորամասի ավտոմոբիլային ծառայության պետին, սակայն վերջիններս երթը չթույլատրելու մասով որեւէ գործողություն չեն կատարել:

Ավտոհավաքակայանում Վ.Պ.-ն եւ Ս.Հ.-ն մեքենան փաստացի չեն ստուգել, սահմանափակվել են միայն ձեւական գործողություններ կատարելով, ինչի հետեւանքով անսարքություններ չեն հայտնաբերվել եւ թույլատրվել է երթը, որի արդյունքում ավտոմեքենան տեխնիկական անսարքության պատճառով հայտնվել է ձորում:

Վթարի հետեւանքով մահացել է 4 զինծառայող, 18 զինծառայող ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

Հսկող դատախազը հանրային քրեական հետապնդում է հարուցել ՀՀ ՊՆ զորամասի պարտադիր ժամկետային զինծառայողի, զորամասի տեխնիկական մասի պետի, ավտոմոբիլային ծառայության պետի, զորամասի հրաձգային գումարտակի 2 հրամանատարների նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 538-րդ հոդվածի 4-րդ մասով (մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը) եւ զորամասի տեխնիկական մասի հսկիչ-պետի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 538-րդ հոդվածի 4-րդ մասով եւ 445-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնեական կեղծիքը):

ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿ

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ դեկտեմբերի 17-18-ը ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 110 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:

Նախկինում կատարված հանցագործություններից բացահայտվել է ավազակության, անձնական ունեցվածքի գողության, մարմնական վնասվածք պատճառելու եւ ավտոմեքենայի գողության՝ 1-ական դեպք:

Հայտնաբերվել է 8 հետախուզվող :

Հայտնաբերվել է 2 անհետ կորած:

Գրանցվել է զենք-զինամթերքի կամավոր հանձման 3 դեպք:

Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 13 պատահար. 2 մարդ զոհվել է, 12-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 18-ից 19-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 114 դեպք, որից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՊՆ-Ն ԳՈՒՄԱՐ ԿԲՌՆԱԳԱՆՁԻ «ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ»-Ի ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻՑ

ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչը 2023թ. դեկտեմբերի 27-ին հայցադիմում է ներկայացրել Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ Տավուշի մարզի Բերդ համայնքի Արծվաբերդ գյուղում հաշվառված, 1997 թվականին ծնված Լիլիթ Արագածի Չոբանյանից գումարի բռնագանձման պահանջով: Դատարանը 2024 թ. հունվարի 17-ին որոշում է կայացրել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին: Նույն օրվա մեկ այլ որոշմամբ՝ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մերժվել է: ՀՀ պաշտպանության նախարարության եւ Լիլիթ Չոբանյանի միջեւ կնքված պայմանագրի հիման վրա վերջինս սովորել եւ ավարտել է ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը՝ նշանակվելով համապատասխան զինվորական պաշտոնի: Պայմանագրի 2-րդ կետով կողմերը պայմանավորվել են, որ ռազմական ուսումնական հաստատությունում ուսումնառության եւ հետուսումնական պայմանագրային ծառայության ժամկետը 20 տարի է (ներառյալ ուսման ժամկետը՝ որպես պարտադիր զինվորական ծառայություն): Հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայության ընթացքում Լիլիթ Չոբանյանը վերադաս հրամանատարությանը խնդրել է զինվորական ծառայությունից իրեն արձակել ՀՀ ԶՈՒ պահեստազոր՝ ընտանեկան եւ անձնական խնդիրներից ելնելով: Պաշտպանության նախարար Ս. Պապիկյանի 2023 թ. փետրվարի 2-ի հրամանով ավագ լեյտենանտ Լիլիթ Չոբանյանը արձակվել է ՀՀ զինված ուժերի պահեստազոր: Վերոնշյալ փաստի ուժով ծագել է Լ. Չոբանյանի պարտավորությունը՝ վճարելու կողմերի միջեւ կնքված համաձայնագրով սահմանված տուժանքը, սակայն նա վճարում չի իրականացրել: ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչը դատարանից խնդրել է Լ. Չոբանյանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 7 միլիոն ՀՀ դրամ գումար, ինչպես նաեւ նախապես վճարված 210 հազար ՀՀ դրամ պետական տուրքի գումարը: Ըստ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի՝ 2024թ. հոկտեմբերի 1-ին Դիլիջան քաղաքում կայացած դատական նիստում Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Ն. Դալլաքյանը վճռել է հայցը բավարարել, Լ. Չոբանյանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 7 միլիոն ՀՀ դրամ գումար՝ որպես տուժանքի գումար, նրանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 210 հազար ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար: Դատարանի վճիռը օրենքով սահմանված մեկամսյա ժամկեռում չի բողոքարկվել, այն մտել է օրինական ուժի մեջ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԳՅՈՒՄՐՈՒ ՀՐԱՊԱՐԱԿԸ՝ ԱՄԱՆՈՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

75 ՄԼՆ ԴՐԱՄ՝ ԵՂԵՎՆՈՒ ԵՎ ՁԱՐԴԱՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ոչ թե Գյումրու համայնքապետը, այլ Շիրակի մարզպետի աշխատակազմը ամանորյա դեկորների նորերով փոխարինման եւ վերանորոգման ծառայություն է ձեռք բերել «Գյումրու վերելակային տնտեսություն» ԲԲԸ-ից:

«Ժողովուրդ» օրաթերթը պետական գնումների կայքից տեղեկանում է, որ Շիրակի մարզպետի աշխատակազմը պայմանագիր է կնքել 20 մլն 100 հազար դրամ արժողությամբ, որով ձեռք է բերվել տոնածառի եւ խաղալիքների տեղադրում, ապամոնտաժում, տոնածառ եւ խաղալիքներ, ամանորյա դեկորների նորերով փոխարինման եւ վերանորոգման ծառայություն:

Այս տարի որոշվել է Գյումրու կենտրոնական հրապարակի տոնածառը փոխել, որի համար էլ կնքվել է 3 պայմանագիր: Երեք պայմանագիրն էլ ձեռք է բերվել դեկտեմբերի 11-ին՝ «հրատապ բաց մրցույթ» գնման եղանակով:

Գնումը հրատապ բաց մրցույթի ձեւով է իրականացվել, քանի որ իշխանությունը մինչեւ դեկտեմբերի 11-ը չէր կարողանում Գյումրու համայնքապետի ժամանակավոր պաշտոնակատար ընտրել:

Պայմանագրերը կնքվել են «ԱՐԵԳԱԿ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի եւ «Գյումրու վերելակային տնտեսություն» ԲԲԸ-ի հետ:

«ԱՐԵԳԱԿ ԳՐՈՒՊ» ընկերությունը ՀՀ արդարադատության իրավաբանական անձերի պետական ռեգիստրում գրանցվել է 2024 թվականի փետրվարի 22-ին: Ընկերությունը, գրանցվելուց հետո, առաջին պայմանագիրը կնքել է մայիսին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության հետ: Ընկերությունը Փարաջանովի հոբելյանական ծրագրերի շրջանակում պետք է պատրաստեր «Փարաջանով» բույր-հուշանվերների հավաքածու:

Գյումրիում ստեղծված ներքաղաքական լարված եւ փոթորկված իրավիճակից ելնելով՝ ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանի՝ 2024 թվականի դեկտեմբերի 2-ի հանձնարարականով Գյումրի համայնքի գլխավոր տոնածառի գնման, տեղադրման եւ զարդարման, ինչպես նաեւ ամանորյա դեկորների նորերով փոխարինման եւ վերանորոգման աշխատանքներն իրականացվելու են Շիրակի մարզպետի աշխատակազմի միջոցով:

«Քանի որ մոտենում են ամանորյա տոները, եւ չնախատեսված իրավիճակի առաջացման հետեւանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ եւ, չնախատեսված իրավիճակից ելնելով, գնման այլ ձեւերի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել Գյումրի համայնքի գլխավոր տոնածառի գնման, տեղադրման եւ զարդարման, ինչպես նաեւ ամանորյա դեկորները նորով փոխարինման եւ վերանորոգման աշխատանքները իրականացնել մեկ անձից գնման ընթացակարգով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթը»,- հրապարակված է նախկին մարզպետ Մուշեղ Մուրադյանի պաշտոնավարման վերջին որոշումներից մեկի մեջ:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Գյումրին Ամանորին պատրաստվում էր դեռ սեպտեմբեր ամսից, քանի որ Գյումրի համայնքի ներկա ավագանու անդամները սեպտեմբերի 10-ին հաստատեցին՝ «համայնքի բյուջեից հատկացնել 75 մլն դրամ, որից 68 միլիոնը հատկացվելու է Վարդանանց հրապարակում տեղադրվող արհեստական եղեւնու ճյուղերից պատրաստված 25-30 մետր բարձրությամբ ամանորյա նոր տոնածառի եւ նոր զարդարանքների ձեռք բերման համար, իսկ 7 միլիոնը՝ համայնքին պատկանող հին զարդարանքների վերանորոգման նպատակով»:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՇՏԱՊՕԳՆՈՒԹՅԱՆ 6 ՄԵՔԵՆԱ ՀՀ-ԻՆ՝ ԿՈՐԵԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ

Առողջապահության նախարարի առաջին տեղակալ Լենա Նանուշյանը եւ նախարարի տեղակալ Արմեն Գասպարյանն ընդունել են Կորեայի Հանրապետության դեսպանության եւ Կորեայի միջազգային համագործակցության գործակալության (ԿՄՀԳ) ներկայացուցիչներին:

ՀՀ առողջապահության նախարարությունից տեղեկացնում են, որ անցնող տարվա ընթացքում կորեացի գործընկերների հետ արձանագրել են կառուցողական համագործակցություն:

Նախարարի առաջին տեղակալ Լենա Նանուշյանն ընդգծել է հատկապես առողջության համապարփակ ապահովագրության, բժշկական ծառայությունների որակի բարելավման եւ էլեկտրոնային առողջապահության ոլորտում կորեական լավագույն փորձի ուսումնասիրությունը: Նա կարեւորել է նաեւ Երեւանում Կորեայի միջազգային համագործակցության գործակալության գրասենյակի բացումը, ինչը կնպաստի հետագա համագործակցությանը: Ի նշան փոխադարձ բարեկամության եւ համագործակցության՝ Կորեայի Հանրապետության կառավարությունը Զարգացման պաշտոնական աջակցության (ODA) 2024թ. ծրագրի շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարությանը նվիրաբերել է շտապօգնության 6 մեքենա, որոնցով կթարմացվի Հանրապետական շտապօգնության ծառայության ավտոպարկը:

«Այս փուլում, երբ իրականացնում ենք շտապօգնության ոլորտի բարեփոխումներ, շտապօգնության ավտոպարկը եւս 6 մեքենայով համալրելը կօգնի ավելի լավ կատարելու մեր առջեւ դրված խնդիրները»,- նշել է փոխնախարար Արմեն Գասպարյանը:

Քննարկվել է նաեւ մոր եւ մանկան առողջության պահպանման ոլորտում հնարավոր աջակցության հնարավորությունը:

ՏԱՔՍԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՆԻ՞ ՀԴՄ Է ԳԵՆԵՐԱՑՎԵԼ

2024 թվականի սեպտեմբերի 1-ից տաքսի ծառայության ուղեւորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը կամ ֆիզիկական անձինք միացել են հարկային մարմնի էլեկտրոնային համակարգին եւ ուղեւորներին տրամադրում են էլեկտրոնային ՀԴՄ կտրոն:

Մինչ այս որոշման ընդունումը տաքսի ծառայություն մատուցողները դժգոհ էին որոշումից, նույնիսկ «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցներում ասում էին, որ օրենքի ընդունումից հետո էլ չեն պատրաստվում ՀԴՄ կտրոններ տրամադրել, անգամ, եթե իրենց տուգանեն:

Հետաքրքիր է, թե 4 ամիս անց քանի՞ ՀԴՄ կտրոն է գեներացվել:

«Ժողովուրդ» օրաթերթը գրավոր հարցմամբ դիմեց ՀՀ ՊԵԿ-ին պարզելու՝ քանի ՀԴՄ կտրոն է գեներացվել մինչ այս շրջանը:

ՀՀ ՊԵԿ-ից «Ժողովուրդ» օրաթերթին պատասխանեցին, որ ՀՀ ՊԵԿ հարկային մարմնի տեղեկատվական շտեմարանում 17.12.2024 թվականի առկա տվյալների համաձայն՝ 2024 թվականի սեպտեմբերի 1-ից տաքսի ծառայության ոլորտում ուժի մեջ մտած նոր կարգավորումների շրջանակում՝ 2024 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում տաքսի ծառայությունների կողմից տպված կտրոնների քանակը կազմում է 22 միլիոն 949 հազար 690-ը, որոնցով գեներացված հասույթը կազմում է 26 միլիարդ 872 միլիոն 739 հազար 082 դրամ:

Հիշեցնենք նաեւ, որ Կառավարության նախորդ նիստի ժամանակ Նիկոլ Փաշինյանը տաքսիների գեներացրած ՀԴՄ կտրոնների քանակը սխալ թվով էր ներկայացրել, ինչից հետո ֆեյսբուքյան իր էջում հրապարակում էր կատարել՝ շտկելով կատարած սխալը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 16 պատահար. 22 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԲԱՑՎԵՑ «ՅՈՒՆԻԲԱՆԿԻ» ՆՈՐ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ

«Դալմա Գարդեն Մոլում» բացվեց «Յունիբանկի» «Դալմա» մասնաճյուղը: Նորաբաց մասնաճյուղում ստեղծված են բոլոր անհրաժեշտ պայմանները՝ հարմարավետ, արագ եւ ժամանակակից պահանջներին համապատասխան սպասարկում ապահովելու համար:

Մասնաճյուղն աշխատելու է շաբաթական 7 օր՝ ժամը 12:30-ից մինչեւ 20:30-ն: Հատուկ աշխատանքային գրաֆիկը հնարավորություն է կտա հաճախորդներին այցելել մասնաճյուղ եւ օգտվել որակյալ բանկային ծառայություններից իրենց համար առավել հարմար ժամերին:

Մասնաճյուղը ֆիզիկական ու իրավաբանական անձանց տրամադրելու է բանկային բոլոր ծառայությունները՝ ավանդների ընդունում, սպառողական եւ բիզնես վարկավորում, դրամական փոխանցումներ, քարտերի տրամադրում եւ սպասարկում, հաշվարկա-դրամարկղային սպասարկում, ներդրումների իրականացում բաժնետոմսերում եւ պարտատոմսերում եւ այլն: Սպասարկման սրահում առկա է նաեւ վճարային տերմինալ՝ ինքնասպասարկման համար:

«Յունիբանկի» «Դալմա» մասնաճյուղի հասցեն է ք. Երեւան, Ծիծեռնակաբերդի խճուղի 3 (Դալմա Գարդեն Մոլ առեւտրի կենտրոն), 1-ին հարկ, 6-րդ տարածք:

ՓԱՇԻՆՅԱՆԸ՝ SECOND HAND ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բարեգործության տրամաբանությունից ընդհանրապես պետք է դուրս գալ: Այս մասին կառավարության նիստում ասաց վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Մենք պետք է այնպիսի օրենք ընդունենք, որ ՀՀ-ն դադարի second hand ապրանքների հիմնական ուղղություն դառնալը, սա անթույլատրելի է եւ ուղիղ հակասում է այն տրամաբանությանն ու գաղափարախոսությանը, որը մենք իրագործում ենք: Ես դեմ եմ նման որեւէ տիպի աջակցություն ստանալուն, նույնիսկ, եթե եկել է ՀՀ եւ գտնվում է մաքսատանը, ոչինչ, թող մաքսատնից հետ տան: Աշխարհում այնքան երկրներ կան, որ դրա կարիքն ունեն ու իրենց համար խնդիր չէ օգտագործած, մաշված, կիսափչացած ապրանքները վերցնելը: ՀՀ չպետք է մտնի նման որեւէ ապրանք»,- ասաց Փաշինյանը:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

466 ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ ԽԱԽՏԵԼ Է ՀԴՄ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Պետական եկամուտների կոմիտեն տեղեկացնում է, որ 2024 թվականի նոյեմբեր ամսվա ընթացքում արձանագրվել են հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման կանոնների խախտման 466 դեպք եւ շուրջ 271.4 մլն դրամի չափով տուգանք: Արձանագրված խախտումներից 29 դեպքով 29 հարկ վճարողի մոտ արձանագրվել է 1.0 մլն դրամ եւ ավելի տուգանք՝ ընդհանուր շուրջ 130 մլն դրամի չափով:

Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման կանոնների խախտման դեպքերով 1.0 մլն դրամ եւ ավելի տուգանք արձանագրվել է փաստացի գործունեության հետեւյալ ոլորտներում.

բանկային, վարկային, ապահովագրական կամ այլ ֆինանսական գործունեության եւ մթերային խանութի ոլորտներում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է 13.74 մլն դրամ տուգանք,

կացության կազմակերպման ոլորտում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է 1.3 մլն դրամ տուգանք,

կացության կազմակերպում, հագուստի, կոշիկի եւ գործվածքների առեւտուր եւ կրթության ոլորտներում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է 1.43 մլն դրամ տուգանք,

կոսմետիկայի, արդուզարդի եւ օծանելիքի խանութ, հագուստի, կոշիկի եւ գործվածքների առեւտրի ոլորտներում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է 4.13 մլն դրամ տուգանք,

հագուստի, կոշիկի եւ գործվածքների արտադրության, հագուստի, կոշիկի եւ գործվածքների առեւտրի ոլորտներում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է 1.8 մլն դրամ տուգանք,

հանրային սննդի (հանդիսությունների սրահ ունեցող եւ չունեցող) ոլորտում 2 հարկ վճարողի մոտ 2 դեպքով արձանագրվել է շուրջ 11.44 մլն դրամ տուգանք,

հեղուկ եւ կոշտ վառելիքի առեւտրի ոլորտում 3 հարկ վճարողի մոտ 3 դեպքով արձանագրվել է շուրջ 4.15 մլն դրամ տուգանք,

հեղուկ եւ կոշտ վառելիքի առեւտուր եւ այլ ոլորտներում 2 հարկ վճարողի մոտ 2 դեպքով արձանագրվել է շուրջ 29.7 մլն դրամ տուգանք,

հեղուկ եւ կոշտ վառելիքի առեւտրի եւ ավտոգազալցակայանի ոլորտներում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է շուրջ 5.6 մլն դրամ տուգանք,

հեղուկ եւ կոշտ վառելիքի առեւտրի, ավտոտեխսպասարկման եւ (կամ) ավտոլվացման, ավտոպահեստամասերի առեւտրի ոլորտներում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է 19.7 մլն դրամ տուգանք,

հեղուկ եւ կոշտ վառելիքի առեւտրի եւ կացության կազմակերպման ոլորտներում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է շուրջ 2.5 մլն դրամ տուգանք,

մթերային խանութում 11 հարկ վճարողի մոտ 11 դեպքով արձանագրվել է շուրջ 15.65 մլն դրամ տուգանք,

մթերային խանութի եւ հանրային սնունդ (չունի հանդիսությունների սրահ) ոլորտներում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է շուրջ 14.5 մլն դրամ տուգանք,

սուրճի եւ թեյի արտադրություն, հանրային սնունդ (չունի հանդիսությունների սրահ) եւ այլ ոլորտներում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է շուրջ 1.7 մլն դրամ տուգանք,

տնտեսական ապրանքների խանութում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է 2.6 մլն դրամ տուգանք:

Միաժամանակ, կոմիտեն տեղեկացնում է, որ ՀԴՄ կիրառման կանոնների խախտում թույլ տված հարկ վճարողների ցանկերում հաշվի չեն առնվել ստուգման ակտերի վարչական կամ դատական կարգով հնարավոր վիճարկման արդյունքները:

ՊԵԿ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՇԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերն ըստ ներկայացված հերթականության՝

- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Տարոն-4 Ածխահատների թաղամաս, 26 շենք, 8 հասցեում գտնվող 83,2 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 13200000 ՀՀ դրամ:

- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Համբարձումյան փողոց, 9ա շենք, 20 հասցեում գտնվող 74,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 11100000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Շենգավիթ, Գ. Նժդեհի փողոց, 6 շենք, 5 հասցեում գտնվող 66,21 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝41430000 ՀՀ դրամ:

- Արարատի մարզ, համայնք Մասիս, Մասիս ք., 7-րդ թաղամասի 4-րդ փողոց, 17 հասցեում գտնվող 122,4 ք.մ. բնակելի տուն եւ 0,04135 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝32030000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Չարենցավան, Չարենցավան ք., 8-րդ թաղամաս, 21 շենք, 32 հասցեում գտնվող 66,1 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 18600000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Ավան, Մ. Խուդյակովի փողոց, 68 շենք, 43 հասցեում գտնվող 77,9 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝40080000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Բաբաջանյան փողոց, 133 շենք, 22 հասցեում գտնվող 72.3 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝34450000 ՀՀ դրամ:

- Արմավիրի մարզ, համայնք Արմավիր, Արմավիր ք., Սայաթ-Նովայի փողոց, 5ա շենք, 5 հասցեում գտնվող 74.3 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 19810000 ՀՀ դրամ:

- Լոռու մարզ, համայնք Վանաձոր, Վանաձոր ք., Երեւանյան խճուղի, 105 շենք, 21 հասցեում գտնվող 69,82 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 15200000 ՀՀ դրամ:

- Տավուշի մարզ, համայնք Դիլիջան, քաղաք Դիլիջան, Գետափնյա փողոց, 74 շենք, 18 հասցեում գտնվող 91,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 31590000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, Աբովյան ք., Սարալանջի փողոց, 5 շենք, 7 հասցեում գտնվող 45,4 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝16800000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Նոր-Նորք, Նոր-Նորքի 8-րդ միկրոշրջան, 37 շենք, 20 հասցեում գտնվող 73,3 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝24600000 ՀՀ դրամ:

- Արարատի մարզ, համայնք Նոր Խարբերդ, 25-րդ փողոց, 22 հասցեում գտնվող 53,4 ք.մ. բնակելի տուն եւ 0,01393 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 15970000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն, Թբիլիսյան խճուղի, 28/5 հասցեում գտնվող 320,7 ք.մ. բնակելի տուն, 172,1 քմ օժանդակ շինություն, 34,4 քմ օժանդակ շինություն, 4,1 քմ օժանդակ շինություն, 45 քմ օժանդակ շինություն, 7,8 քմ /13,3 խմ/ պարիսպ եւ 0,096987 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 177600000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 07.01.2025թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 07.02.2025թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ-ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալ ու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով:Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am , www.borsa.am կայքերը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՈՐ ՖԻԼՄԵՐՆ ԵՆ ՆԵՐԱՌՎԵԼ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՑԱՆԿՈՒՄ

«ՕՍԿԱՐ»-Ի ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՇՈՐԹԼԻՍՏԸ

ԱՄՆ-ի կինոարվեստների ակադեմիան դեկտեմբերի 17-ին հրապարակել է 10 անվանակարգում «Օսկար» կինոմրցանակի հավակնորդների շորթլիսթը՝ կարճ ցուցակը: Այս մասին նշված է «Օսկար» մրցանակաբաշխության կայքում:

«Լավագույն արտասահմանյան գեղարվեստական ֆիլմ» անվանակարգում հաղթանակի համար հավակնում է 15 կինոնկար. դրանց թվում են բրազիլացի ռեժիսոր Ուոլթեր Սալեսի «Ես դեռ այստեղ եմ» (I'm still here), կանադացի ռեժիսոր Մեթյու Ռենկինի «Ունիվերսալ լեզու», ֆրանսիացի Ժակ Օդիարի «Էմիլիա Պերես» (Emilia Perez), դանիացի ռեժիսոր Մագնուս ֆոն Հորնի «Ասեղով աղջիկը» (The Girl with the Needle), չեխ ռեժիսոր Իրժի Մադյի «Ալիքները» (Waves), իսլանդացի Բալտասար Կորմակուրի «Հպում» ֆիլմերը, ինչպես նաեւ կինոնկարներ Մեծ Բրիտանիայից, Գերմանիայից, Իտալիայից, Կանադայից, Լատվիայից, Նորվեգիայից, Պաղեստինից, Թաիլանդից, Սենեգալից:

Հայաստանից այս անվանակարգում առաջադրված ֆիլմը՝ Էդգար Բաղդասարյանի «Յաշան եւ Լեոնիդ Բրեժնեւը», չի ընդգրկվել հավակնորդների ցուցակում:

«Լավագույն երաժշտություն» անվանակարգում ներկայացված են այնպիսի ֆիլմեր, ինչպիսիք են «Մարտահրավերներ նետողները» (Challengers), «Կոնկլավ» (Conclave), «Վայրի ռոբոտը» (The Wild Robot), «Բիթլջուս-Բիթլջուս» (Beetlejuice Beetlejuice), «Գլուխկոտրուկ 2» (Inside Out 2) ֆիլմերը:

«Լավագույն վավերագրական ֆիլմ» անվանակարգի շորթլիսթում ընդգրկված են «Բիբիի ֆայլերը» (The Bibi Files), «Սեւ արկղի օրագրերը» (Black Box Diaries), «Դահոմեյ» (Dahomey), «Ֆրիդա» (Frida), «Հոլիվուդգեյթ» (Hollywoodgate), «Ճենապակյա պատերազմ» (Porcelain War) կինոնկարները:

Բացի այդ, հեղինակավոր կինոմրցանակի հավակնորդները ներկայացված են «Լավագույն կարճամետրաժ վավերագրական ֆիլմ», «Լավագույն գրիմ եւ սանրվածք», «Լավագույն երգ», «Լավագույն կարճամետրաժ մուլտֆիլմ», «Լավագույն գեղարվեստական կարճամետրաժ ֆիլմ», «Լավագույն ձայն», «Լավագույն տեսողական էֆեկտներ» անվանակարգերում:

«Օսկար»-ի 97-րդ մրցանակաբաշխությունը տեղի կունենա 2025 թ. մարտի 2-ին: Այն վարելու է ամերիկացի հաղորդավար, կատակերգու Քոնան Օ'Բրայենը:

«Օսկար»-ի կարող են առաջադրվել այն ֆիլմերը, որոնք մրցանակաբաշխությանը նախորդող օրացուցային տարվա առնվազն յոթ օրն անընդմեջ գտնվել են Լոս Անջելեսի կինովարձույթում: Օսկարի արձանիկը ներկայացնում է ասպետի, որը կանգնած է կինոժապավենի կոճի վրա եւ առջեւում երկար սուր է պահում: Դրա բարձրությունը 34 սմ է, քաշը՝ 3,85 կգ: Մրցանակը շնորհվում է 23 անվանակարգերում:

Հ. Բ.

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ՝ ՎԻԵՆՆԱՅԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԱՎԱՃԱՌՈՒՄ

Հայաստանը Վիեննայում առանձին տաղավարով շարունակում է մասնակցել Շպիտելբերգի Սուրբ Ծննդյան տոնավաճառին:

Եվս մի քանի օր՝ մինչեւ դեկտեմբերի 23-ը, հայկական տաղավարում կշարունակվի ցուցադրվել շուրջ 70 վարպետի ձեռագործ աշխատանք՝ փայտարվեստի, ասեղնագործության, թաղիքագործության, խեցեգործության, տիկնիկագործության, մետաղագործության նմուշներ, ամանորյա խաղալիքներ, հուշանվերներ: Շպիտելբերգի այս տարվա տոնավաճառն ունի բնապահպանական շեշտադրում, եւ հայկական տաղավարը եւս հավատարիմ է մնացել դրան՝ներկայացնելով վերամշակված թղթից ափսեներ, որոնք արտադրվում են Խնձորեսկում: Հայկական տաղավարն առանձնահատուկ է իր բազմազան նմուշներով եւ մեծ հետաքրքրություն է առաջացրել այցելուների շրջանում:

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը ծրագիրն իրականացնում է Երեւանի քաղաքապետարանի հետ՝ ՀՀ ԱԳՆ աջակցությամբ, Մշակույթի զարգացման հիմնադրամի, «Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան» ՊՈԱԿ-ի եւ Fastex ընկերության հետ համագործակցությամբ:

Շպիտելբերգի տոնավաճառը Վիեննայի ամենահայտնի Սուրբ Ծննդյան տոնավաճառներից է, որն ամեն տարի գրավում է հազարավոր այցելուների ուշադրությունը: Այն իրականացվում է 1970-ական թվականներից սկսած՝ Վիեննայի Շպիտելբերգ պատմական թաղամասի Շպիտելբերգգասե, Գուտենբերգգասե եւ Շրանկգասե հետիոտնային փողոցներում:

Նշենք նաեւ, որ 2023 թ. Հայաստանն առանձին տաղավարով մասնակցել է նաեւ Ստրասբուրգի Սուրբ Ծննդյան տոնավաճառին:

ՀՀ ԿԳՄՍՆ Հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչություն

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆԻ «ՍԱՐԵՐՈՒՄ» ՈՐՄՆԱՆԿԱՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵԼ Է

ԿԳՄՍ նախարարության դրամաշնորհային աջակցությամբ ավարտվել են ՀՀ վաստակավոր գեղանկարիչ Հակոբ Հակոբյանի «Սարերում» որմնանկարի՝ Գյումրու համայնքապետարանի շենք տեղափոխման եւ վերականգնման աշխատանքները:

Որմնանկարը 1988 թ. ավերիչ երկրաշարժի հետեւանքով կիսավեր գործարաններից մեկից 2016 թ. տեղափոխվել էր Գյումրու Վ. Աճեմյանի անվան դրամատիկական թատրոն:

Որմնանկարի էսքիզային նախագիծը 2023 թ. քննարկվել է ԿԳՄՍ նախարարությանը կից պատմության եւ մշակույթի մոնումենտալ հուշարձանների պահպանության հարցերով մասնագիտական աշխատանքային խմբի խորհրդում (նախագծի հեղինակ՝ Ա. Պետրոսյան) եւ ստացել դրական եզրակացություն:

Նախագծի հիման վրա կազմված նախահաշվային գումարը ԿԳՄՍ նախարարությունը դրամաշնորհի տեսքով տրամադրել է Գյումրու «Վ. Աճեմյանի դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ին, որի՝ բաց ընթացակարգով հայտարարած մրցույթում հաղթող է ճանաչվել «Արվեստ եւ ժառանգություն» պատմամշակութային արժեքների վերականգնման կենտրոն» հասարակական կազմակերպությունը: Որմնանկարի ապամոնտաժման, նոր վայր տեղափոխման եւ տեղում վերականգնման աշխատանքները տեւել են 3 ամիս:

Հիշեցնենք, որ Հ. Հակոբյանի «Սարերում» որմնանկարի համայնքապետարան տեղափոխումը պայմանավորված է թատրոնի կողմից հուշարձանի հետագա պահպանության անհնարինությամբ:

ԿԳՄՍՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԴՎԱԼԻՇՎԻԼԻՆ ՀԱՂԹԱՆԱԿ Է ՄԱՂԹԵԼ ԱՐՄԱՆ ԾԱՌՈՒԿՅԱՆԻՆ

UFC-ի թեթեւագույն քաշային կարգի չեմպիոն Մերաբ Դվալիշվիլին հայերեն գրառում է կատարել:

Վրացի մարտիկը տեղադրել է Արման Ծառուկյանի ու Իսլամ Մախաչեւի լուսանկարը եւ հաղթանակ մաղթել հայ մարզիկին:

Ծառուկյանի ու Մախաչեւի ռեւանշ մենամարտը կայանալու է հունվարի 18-ին:

ԱԶԳԱՅԻՆ ԹԻՄԸ ԽՈՒՍԱՓԵՑ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայաստանի ֆուտզալի հավաքականը Եվրոպայի առաջնության ընտրական փուլի երկրորդ տուրի շրջանակներում արտագնա խաղում մրցեց Ղազախստանի հետ:

Ալմաթի քաղաքում կայացած խաղի մեկնարկում Հայաստանի ֆուտզալի ազգային թիմն առաջինը բացեց հանդիպման հաշիվը, սակայն չպահպանեց հաղթական հաշիվը: Հանդիպումն ավարտվեց ոչ-ոքի՝ 4:4 հաշվով:

Հայաստանի ֆուտզալի հավաքականի կազմում գոլերը խփեցին Ռաֆիկ Մելիքյանը, Միհրան Դերմեջյանը (դուբլ), Արսեն Պետրոսով:

Ընտրական փուլի շրջանակներում Հայաստանի ֆուտզալի ազգային թիմը հաջորդ հանդիպումը կանցկացնի արդեն 2025 թվականի փետրվարի 1-ին՝ մրցելով Ալբանիայի դեմ: Այդ խաղը կկայանա Երեւանում:

ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԻ ՆՈՐ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՐԶԻՉԸ

Հայաստանի բասկետբոլի Մ16 տարեկանների ազգային ընտրանին նոր գլխավոր մարզիչ ունի:

Այս մասին հայտնում է Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիան: Մինչեւ 16 տարեկանների հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնում նշանակվել է Թադե Մարտիրոսյանը:

Մարտիրոսյանը երկար տարիներ մարզչական գործունեություն է ծավալել ԱՄՆ-ում: Նրա մի շարք սաներ հանդես են եկել կանանց Հայաստանի տարբեր տարիքային հավաքականներում: 2000-2015 թվականներին Մարտիրոսյանը եղել է «Գլենդել» տղաների թիմի մարզչի օգնականը: 2015 թվականից նա գլխավորում է «Գլենդել» աղջիկների թիմը: 2018 թվականին նրա գլխավորած թիմը դարձել է Խաղաղօվկիանոսյան լիգայի չեմպիոն, իսկ ինքը ճանաչվել է առաջնության լավագույն մարզիչ: 2024 թվականի ամռանը Թադե Մարտիրոսյանի գլխավորությամբ կանանց Հայաստանի ազգային հավաքականը մասնակցել է Եվրոպայի փոքր երկրների առաջնությանը:

Մարտիրոսյանի գլխավորությամբ Մ16 կանանց հավաքականը կմասնակցի Եվրոպայի C դիվիզիոնի առաջնությանը, որը կանցկացվի հուլիսի 8-13-ը Կոսովոյում:

● *Դեկտեմբերի 28-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կցուցադրվի «Ես անուն չունեմ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 5.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս ընդգրկվել որակավորված ներքին աուդիտորների ցանկում:

Ստեփան Ստեփանյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով նախատեսված ցանկում ընդգրկվելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարություն կարող են դիմում ներկայացնել այն անձինք, որոնք ունեն Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի միջազգայնորեն ճանաչված հետեւյալ որակավորումներից առնվազն մեկը՝

1) ներքին աուդիտորների միջազգային ինստիտուտի կողմից իր կրթական ստանդարտներին համապատասխան անցկացված քննությունների արդյունքում տրված ներքին աուդիտորի որակավորումը (Certified Internal Audit- CIA) կամ հանրային հատվածի աուդիտորի որակավորումը (Certified Government Auditing Professional - CGAP),

2) որակավորված երդվյալ հաշվապահների ասոցիացիայի (ACCA) կողմից անցկացված առնվազն բազային (ֆունդամենտալ) 9 քննության (F1-F9) արդյունքում տրված հաշվապահ-աուդիտորի որակավորումը,

3) հանրային ֆինանսների եւ հաշվապահության արտոնագրված ինստիտուտի (Chartered Institute of Public Finance Accountancy: CIPFA) կողմից տրված որակավորումը,

4) որակավորված հանրային հաշվապահների ամերիկյան ինստիտուտի (American Institute of Certified Public Accountants) կողմից տրված հանրային հաշվապահի որակավորումը (CPA):

Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի այլ կառույցների կողմից տրված հետեւյալ որակավորումներից առնվազն մեկը՝

1) «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն տրված աուդիտորի որակավորումը,

2) Հայաստանի Հանրապետության հաշվապահների եւ աուդիտորների ասոցիացիայի (ՀՀԱԱ) կողմից տրված աուդիտորի որակավորումը:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ դիմումին կից պետք է ներկայացնել՝

- անձնագրի պատճենը,
- համապատասխան որակավորումը հավաստող փաստաթղթի պատճենը,
- հայտարարություն:

ՎԱՐԿԱՅԻՆ

ՀԱՐՑ. Իրավունք ունի՞ գրավառուն (բանկ, վարկային կազմակերպություն, գրավատուն) առանց դատարանին տեղյակ դահեկլու (ծանուցելու) վաճառել գրավ դրված գույքը:

Կարինե Մինասյան (31 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ չի կարող: Եթե գրավի պայմանագրով կամ գրավառուի եւ գրավատուի միջեւ կնքված գրավոր համաձայնությամբ առկա է դրույթ՝ առանց դատարանի վճռի գրավ դրված գույքի իրացման մասին, ապա գրավառուն պարտապանի կողմից գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պարտավոր է գրավոր՝ պատշաճ ձեով ծանուցել պարտապանին առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին (բռնագանձման ծանուցում)՝ համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 249 հոդվածի 2-րդ մասի:

Միաժամանակ հայտնում ենք, որ նույն հոդվածը սահմանում է նաեւ, որ բռնագանձման ծանուցումը պարտապանին հանձնելուց երկու ամիս հետո գրավառուն իրավունք ունի իրացնելու գրավի առարկան: Վերոնշյալ համաձայնության բացակայության դեպքում գրավ դրված գույքի հաշվին գրավառուի (պարտատիրոջ) պահանջները բավարարվում են դատարանի վճռով:

Այսպիսով, ֆինանսական կազմակերպությունը պետք է պարտապանին գրավոր ծանուցի գրավադրված գույքի իրացման վերաբերյալ, որից երկու ամիս հետո միայն կարող է իրացնել գույքը:

Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տեղեկացնում ենք, որ եթե կողմերի միջեւ կնքված պայմանագրով սահմանված է տույժի վճարման չափ եւ կարգ, ապա ֆինանսական կազմակերպությունն իրավասու է կիրառել դրանք մինչեւ պարտավորությունների ամբողջական մարումը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Երեկ ավարտվել են ՀՀ վաստակավոր գեղանկարիչ Հակոբ Հակոբյանի «Սարերում» որմնանկարի՝ Գյումրու համայնքապետարանի շենք տեղափոխման եւ վերականգնման աշխատանքները:

Որմնանկարը 1988 թ. ավերիչ երկրաշարժի հետեւանքով կիսավեր գործարաններից մեկից 2016 թ. տեղափոխվել էր Գյումրու Վ. Աճեմյանի անվան դրամատիկական թատրոն:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-5 - 9 -1 + 2
Կոտայքի լեռներ	-6 - 8 -1 +1
Կոտայքի նախալեռներ	-3 - 5 +3 + 5
Գեղարքունիք	-7 - 11 - 2 + 1
Լոռի	- 4 - 8 +1 + 4
Տավուշ	0 - 4 +3 + 6
Արագածոտնի լեռներ	- 6 - 9 0 - 2
Արագածոտնի նախալեռներ	-1 - 4 + 4 + 7

Արարատ	0 - 4 +6 + 8
Արմավիր	-1 - 5 + 5 + 7
Վայոց ձորի լեռներ	-6 - 10 0 - 2
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +12 + 14
Սյունիքի հովիտներ	0 + 3 + 8 + 10
Սյունիքի նախալեռներ	- 4 - 8 - 1 + 4
ԼՂՀ	- 3 - 7 0 + 6
Երեւան	0 - 2 + 2 + 4

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **19.12.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*